Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1669-1678

17
ح-64

2010

NO 204

# ՆՈՒԷՐ

# ՀՈԳԵԻՈՐ

## ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

## Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՅ

Ի ՊԷՏՍ ՏՂԱՅՈՑ

Ա.

Ի ԳԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՊՕՂՈՍԻ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1866

9075-ulk

17

# ՆՈՒԷՐ

# ՀՈԳԵՒՈՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

## Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Հեղ՝. Սամուէլ Պէյրուսեան

Ի ՊԷՏՍ ՏՂԱՅՈՑ

Ա.

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
Ց. Ց. ՊՕՂՈՍԻ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1866

6460-57

Էնուր որդեակ խրատու հօր քոյ՝ եւ մի մերժեր զօրէնս մօր քոյ։

Զի պսակ շնորհաց ընկալցիս ի գլուխ քո. եւ մանեակ ոսկի ի պարանոցի քում։

Առակ. Ա. 8, 9.

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Որդեակ, հօրդ խրատը մտիկ ըրէ՝ ու մօրդ օրէնքէն մի զատուիր. որ գլուխդ շնորհալի՛ պսակ մ՚առնուս, ճիտդ ալ՝ ոսկեղէ՛ն մանեակ։

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՆ

—

Առաջ ԿԱՂԱՆԴԻՆ՝
Ամեն մէկ տղուն
Ընծայ կուտային
Պատկեր մը սիրուն։

Նախնի այդ սովոր
Քիչ քիչ վերնալուն՝
Տան սենակ չափաւոր
Նուէր մ՚ամենուն։

Քննութեան առեն
Գիտնալէն ետև,
Այս զրքէս կարեն
Ընտրուիլ ՊԱՐԳԵՒ։

Պարգեւ, մրցանակ,
Ընծայս և Նուէր՝
Տես, ինչ օրինակ
Կարգի է դասուեր։

Տաներկու Ամսոյն
Զատ ամեն Աւուր

Մէկ մէկ Բնաբան
Խրատ մ'Ոտանաւոր:

Բնաբանին միտքը
Աշխարհիկ լեզուաւ,
Նոյնպէս և խրատը
Այս Տեսրակս եղաւ:

Սերտողին խելքը,
Ծոցը կը լենայ.
Նոր լեզուաւ՝ Հինը
Զեռք կ'առնու, կ'երթայ:

Այսպէս՝ Արարչին
Գովեստ կը կարդայ,
Ճոնարհ միշտ մեծին՝
Գիտութեանց աէր տայ:

Այլ՝ անգին կեանքը
Պարապ չանցուներ՝
Մարդկութեան պարտքը
Մէկուն չընայեր:

Թարգման
ՍԱՄՈՒԷԼ ՊԵՏՐՈՍԵԱՆ

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՕՐ

### ԲՆԱԲԱՆ

*Նկատք որդիք իմ, և լուարուք ինձ. և զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ:*

Սաղմ. ԼԳ. 12.

*Թարգմանութիւն*

*Եկէք զաւակներս, ու ինձ մտիկ ըրէք որ Տիրոջմէն վախնալ ձեզ սովրեցնեմ։*

### ԽՐԱՏ

Տարօր և ուսամբ մատոյ զաւակներ,
Նային վրանիդ, խնդան ձեր ծնողքներ.
Տուէք մէկ մ՝ականջ երկիւղ բաւծին.
Նովաւ պէտք է որ ձեր միտքն զբաղին:

# ՅՈԹՆՈԹԱՐ

## ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

---

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Որ սիրէ զխրատ, սիրէ զիմաստութիւն, և որ ատէ զյանդիմանութիւն՝ անմիտ է։*

Առակ. ԺԲ. 1.

*Թարգմանութիւն*

*Խրատ սիրողն է իմաստասէրը, ու անմիտն է որ յանդիմանութիւնք կ'ատէ։*

---

## Ի Ր Ա Տ

*Իրաւ՝ անմիտ է այն անձն որ*
*Զնիս, խրատն ինչ է չիյտէ, կ'ատէ.*
*Թէպէտ ամենա եմք յանցաւոր,*
*Բայց Տէր սիրածն է որ խրատէ։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ԵՐՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Որդի խորագէտ հնազանդի հօր, որդի անհնազանդ ի կորուստ եղիցի։*

Առակ. ԺԳ. 1.

*Բարգևանութիւն*

*Խելացի զաւակը հօրը կը հնազանդի, անհնազանդ որդին՝ կը կորուսի։*

## Ի Ր Ա Տ

*Ծնողքդ երբ քեզ բան մի ասեն,*
*Հնազանդելու ես Աստուծով.*
*Գողութիւն, սուտ, ժամէր վատնել,*
*Զուր խօսք, խենդ խաղ բնաւ քեզ պէտք չեն։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ՉՈՐՐՈՐԴ ՕՐ

—

### ԲԱՆԱՐԱՆ

*Որք զիս խնդրեն, գտցեն շնորհս։*

Առակ. Ը. 17.

*Քարզևանութիւն*

*Զիս փնտռողները շնորհք կը գտնեն։*

### ԽՐԱՏ

*Աստուածտեսութեան ցանկացող հոգին*
*Սուանայ պիտի հարկաւ Անոր սէրն.*
*Անոր շնորհքը կանխաւ խնդրողներն՝*
*Պարապ չի պիտի ելնեն բնաւին։*

# ՑՈՒՑՈՒԱՐ

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Ողորմեսց ինձ Տէր՝ զի հիւանդ եմ ես։*

Սաղմ. Զ. 2.

*Թարգմանութիւն*

*Հիւանդ եմ ես Տէր, դու ինձ ողորմէ։*

## Խ Ր Ա Տ

*Մեզ ապաւէն Աստուած միայն,*
*Հոգւով, մարմնով բժիշկնիս Այն.*
*Աղաչեմք որ մեզ չքնողու,*
*Պաշտպանն լիցի և այցելու։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ

—

### Բ Ն Ա Բ Ա Ն

*Դադարեցէք ի չարեաց ձերոց։*

Եսայ. Ա. 16.

*Թարգմանութիւն*

*Զար գործքերնէդ դադրեցէք։*

### Ի Ր Ա Տ

*Տղայութեան առջի օրերդ՝*
*Զեռք որ քաշես չար գործքերէդ,*
*Աստուած սրտովդ քեզ կը մաքրէ,*
*Բոլոր յանցանքդ ալ կը ջնջէ։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Ուսարուք զբարին գործել։*

Նայ. Ա. 17.

*Թարգմանութիւն*

*Բարի գործք ընել սովորեցէք։*

## Ի Ր Ա Տ

*Մեր ճամբուն մէջ միշտ առաջնորդ ըլլայ մեզ Տէրն*
*Որ մեք պահեմք ամեն ատեն պատուիրաններն.*
*Բարեհաճի մեզ պարգևել իւր շնորհքներն*
*Որ ճիշդ ընել զիտնամք Անոր օրհնեալ կամքերն։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Արդ՝ ապաշաւեցէք և դարձարուք։ Իջնջեալ զմեղս ձեր։*

Գործ. Գ. 19.

*Թարգմանութիւն*

*Ուստի՝ ապաշխարեցէք ու դարձէք եկէք որ մեղքերնիդ ջնջուին։*

## Ի Ր Ա Տ

*Մեղքերնիս խոստովանելով,*
*Ապաշխարեմք հոգւով, մարմնով.*
*Հաւատոիմք խելքով, մտքով,*
*Բժշկուիմք Սուրբ Հաւատքով։*

# ՑՈՒՆՈՒԱՐ

## ԻՆՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Դու ես Աստուած որ հայեցար յիս։*

Ծնող. ԺԶ. 13.

*Թարգմանութիւն*

*Դու այն Աստուածն ես որ ինձ նայեցար։*

## ԽՐԱՏ

*Գիշերուան մութն ու խաւարին՝*
*Անկէ զատ ոչ կայ որ տեսանէ.*
*Իր�ւ, Նա նման ճառագայթին՝*
*Խաւարն իսկոյն ի լոյս բերէ։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Զվերինն խորհեցարուք, մի զայս՝ որ յերկրի ասատ է։*

Կողոս. Գ. 2.

*Թարգմանութիւն*

*Այս աշխարհիս վերայ եղած բաները մի մտմտաք, այլ՝ վերը գտնուածը մտքերնիդ բերէք։*

## Ի Ր Ա Տ

*Խորհիլ միայն ասոի բաներն չատեղծուեցանք,*
*Մեր բնութիւնն դէպ ի յԵրկինս երթալոյ ջանք*
*Ունի, վեր վեր Թռչիլ կուզէ. Թռչնոց բաղձանք.*
*Աչքը վերն է. հոնէ մեր տեղն. հոն մեր կայանք։*

# ՑՈՒՆՈՒԱՐ

## ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Պարտիմք զմիմեանս սիրել։*

Ա. Յովհ. Գ. 11.

*Թարգմանութիւն*

*Պէտք է որ մէկզմէկ սիրեմք։*

## Ի Բ Ա Տ

Եթէ բոլոր մեր ստացուածքն Աստուծոյ տամք,
Չեմք խորհիր որ որմէ առեր, որու կուտամք.
Սիրով վարուիլ մէկմէկու հետ, միմեանց գթալ
Է իւր կամքն, որ վերնոց նման երջանկանամք։

# ՑՈՒՑՈՒԱՐ

## ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Յիսուս Քրիստոս եկն յաշխարհ փրկել զմեզ աւուրս*

Տիմ. Ա. 15.

*Թարգմանութիւն*

*Մեզաւորնէրը փրկելու համար Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ:*

## ԽՐԱՏ

*Իւր վառք Թողուց մէկ կողմ սիրով,*
*Եկաւ, ծնաւ, աշխարհք մարմնով.*
*Ծնաւ որ երկրածինքս բոլոր*
*Ծնունդ վերադին առնումք Իրմով:*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

—

### Բ Ն Ա Բ Ա Ն

*Ո՛րպէս Աստուած Քրիստոսիւ շնորհեաց ձեզ՝ նոյնպէս և դուք։*

Կողոս. Գ. 13.

*Թարգմանութիւն*

*Ինչպէս որ Աստուած՝ Քրիստոսի միջնորդութեամբը ձեր յանցանքը ներեց, դուք ալ նոյնը ընէք։*

### Խ Ր Ա Տ

*Տէս, որպիսի զթած, ողորմած է Տէր Աստուած. Ո՛րպիսի քաղցր, հեզ և խոնարհ, ներել պատրաստ. Ուստի՝ մեր վարքն Անոր վարուցն յարմարցուցած նոյն ընթացքը բռնեմք երթամք, մինչդեռ եմք աստ։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Պատուիրանք նորա չէն լինչ ծանունք։*

Ա. Յովհ. Ե. Յ.

*Թարգմանութիւն*

*Անոր՝ այսինքն Աստուծոյ պատուէրները ծանր բաներ չէն։*

## Խ Բ Ա Տ

*Հօր Աստուծոյ պատուիրանաց մէջ ընթանալ*
*Որ բերկրալի ճանապարհ մ՚է, պիտոյ մեզ ալ.*
*Զիցէ թէ զուխ, սիրտ կամ մեր ձեռն ընդդիմանայ*
*Ու յանդգնի, այլ՝ բոլորին հնազանդ կենայ։*

# ՇՈՒՆՇՈՒԱՐ

## ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած։*

Սաղմ. Ծ. 12.

*Թարգմանութիւն*

*Մաքուր սիրտ հաստատէ իմ ներսս, ով Տէր Աստուած։*

## ԽՐԱՏ

*Իւր սուրբ հոգին չը հեռանայ.*
*Մեզմէ երես չը դարձնէ.*
*Մեր մեղուցեալ սիրտն նորոգէ*
*Որ շնորհքը լեցուն մնայ։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

---

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Եւ հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում։*

Սաղմ. Ծ. 12.

*Թարգմանութիւն*

*Ու շիտակ հոգի նորոգէ փորիս մէջ։*

## Ի Ր Ա Տ

*Մեծ է Աստուած, սիրտս մեր՝ նորոգ,*
*Հոգին մեր՝ սուրբ, ուղիղ կ՚ընէ.*
*Խելք, միտք կուտայ որ տանենք՝*
*Պարդ վտանգին ճարը տեսնէ։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Ուզղեցէք զճանապարհս ձեր՝ և զգնացս ձեր։*

Երեմ. ԻԹ. 15.

*Թարգմանութիւն*

*Ճամբանէրնէդ ու ընթացքնէդ շտկեցէք։*

## Ի Ր Ա Տ

Աստուածավախ, շիտակ ըլլալ ատենին՝
Ամէն մէկուն դիւրին կ՚ըլլայ, թէ սկսին.
Թէ մեղաւորք անվերջ մեծնան մեղքովէն,
Քրէական կ՚ըլլայ ետքը յանցանքնէն։

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ՈՒԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Լուարուք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ։*

Երեմ. ԻԶ. 13.

*Թարգմանութիւն*

*Զէր Տէր Աստուծոյ ձայնին ականջ տուէք։*

## Ի Ր Ա Տ

*Երբ Տէր Աստուած ձայն տայ ձեզ թէ՝*
*« Եկէք, մանկունք, շնորհք խնդրեցէք. »*
*Տուք պատասխան իսկոյն ասուէ*
*թէ՝ « Տեառն երես տեսանել կուզէք։*

# ՑՈՒՆՈՒԱՐ

## ԻՆՆԵԹԱՍՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Աստուած սէր է։*

Ա. Յովհ. Դ. 8.

*Թարգմանութիւն*

*Սէր է Աստուած։*



## Խ Ր Ա Տ

*Նստում երես, անուշ լեզու ըլլալը տես,*
*Որ ինքն Աստուած յորդորելով կը կանչէ քեզ.*
*«Զնաւակս, եկո, սովրէ ինձմէ» կ՚ըսէ, զիտես.*
*Այս ինչ սէր է. անմնկ սէր մը, որ սէր տեսնես։*

# ՅՈՒՂՈՒԱՐ

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Պատասխանի ոգոք՝ զարձուցանէ զպատմութիւն։*

Առակ։ ԺԵ. 1.

*Բարգևանութիւն*

*Անուշ կամ կակուղ՝ խօսքով պատասխանելը՝ դիմացինին սիրտը կ՚իջեցունէ։*

## Ի Ր Ա Տ

*Ծաղր ու ծանր խօսք ընող մէկուն թէ պատահիս,*
*Ի՞նչ պէտք է որ Դու ալ այնպէս հետը խօսիս.*
*Պակասաւոր զոնուողին Վրէժխնդրութիւն*
*Ըրած կ՚ըլլաս, եթէ ընես Համբերութիւն։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ՔՍԱՆ ԵՒ ՄԻԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Բան խիստ յարուցանէ զբարկութիւն։*

Առակ. ԺԵ. 1.

*Թարգմանութիւն*

*Կծու խօսքը մարդոյս բարկութիւնը ուռք կը հանէ։*

## ԽՐԱՏ

*Առաջ նախատինք, ետքն Պատնէշք,*
*Որ փուռ խօսքեր են, ձայնարձակ շնչիկ.*
*Զայնն որ չը կտրի, իրար որ իյնան,*
*Այլ՝ ծեծ, փայտ, Թուր, մահն անպակաս կ՚ըլլան։*

# ՅՈՒՆՈՒԱ

## ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՕՐ

---

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Աստուած ի խորհուրդս Սրբոց՝ մեծ է և սոսարկու։*

Սաղմ. ՁԸ. 8։

*Թարգմանութիւն*

*Աստուած Սրբերուն ժողովին մէջ, Աստուած մեծ ու սոսարկու է։*

## Ի Ր Ա Տ

*Մեծ, կարող է տեսնել, պատժել կեղծաւորներն.*
*Եկեղեցի մ'երթալ ունին, որ լոկ ցոյց է.*
*Թէ հոն, թէ տունն ամենուն հետ աղօթք ընեն.*
*Կը խոնարհին, կ'ելնեն, կ'իջնան, բայց սրտանց չէ։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Լերուք ընդ միմեանս քաջցուցք՝ զծածք, շնորհել միմեանց։*

Եփես. Դ. 32։

*Թարգմանութիւն*

*Մէկմէկու անուշ լեզու՝ զծած եղիք. միշտ իրարու. նեղրոզ։*

## Խ Ր Ա Տ

*Ասուած վերէն տեսնել կ՚ուզէ*
*Խումբ մ՚ազգայինք միշտ միաբան.*
*Գոհութիւնին ալ կ՚ընդունի,*
*Երբ տղայք սիրով երգեն, ցնծան։*

# ՑՈՒՆՈՒԱՐ

## ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա. Բ Ա. Ն

*Զի գնայցէք պարկեշտութեամբ*

Ա. Թէսաղ. Դ. 11.

*Թարգմանութիւն.*

*Որ, պարկեշտ վարուք ընթանաք։*

## Ի Բ Ա Տ

*Խորհուրդներդ շուկելով միշտ, խոնարհ ըլլաս,*
*Բոլորովին վարքդ ալ մեղմիկ, հանդարտ ըլլայ.*
*Երկնաւոր Հօր օրհնեալ կամքը միշտ կատարես,*
*Եւ զԱյն վարքովդ հաճեցուներս խոնարհ տղու պէս։*

## ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա. Բ Ա. Ն

*Ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա։*

Եբրայ. Դ. 13.

*Թարգմանութիւն*

*Ամէն բան բաց երեսով կը կենայ անոր աչքին առաջ։*

## ԽՐԱՏ

Կարող ես Տէր, որ սուրբ աչքդ, ինսորը պէտք է,
Դիշերային սոսերներէն կը Թափանցէ.
Մեր գաղտնի գործքն աչացդ առջև պարզ ու բաց է.
Փորձութեանց մէջ չը Թողուլ մեզ, այլ մ'ինչ փրկէ։

# ՑՈԻՆՈՒԱՐ

## ՔՍԱՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Հնազանդեցարուք այսուհետև Աստուծոյ։*

Յակոբ. Դ. 7.

*Թարգմանութիւն*

*Ալ՛ տակէ եւ Աստուծոյ հնազանդեցէք։*



## Ի Ր Ա Տ

*Աստուած սիրել, Իրմէն վախնալ է մեզ պատշաճ,*
*Որ ստեղծ զմեզ և ած զմեզ ասա Տէր Աստուած.*
*Տեա Թէ, ուրպէս Նա մեր լեզուաւն է ճիշդ կոչուած,*
*Երկեմք, կարդամք և հնազանդիմք Օրինակ Կամացն։*

# ՑՈՒՆՈՒԱՐ

## ՔՍԱՆ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Կացէք հակառակ չարախօսին. և լիցի փախստական առ ի ձէնջ։*

Յակոբ. Դ. 7.

*Թարգմանութիւն*

*Չարախօսին (որ սատանային համար կ'ըսէ) հակառակ կեցէք որ ան ալ՝ ձեզմէ փախչի։*

## ԽՐԱՏ

*Ծառայական, Թ'Աղատական վաստակոց*
*Մինչ զանձդ տուր, մինչ ի կոչիլ քո յաստեաց.*
*Զի սատանայն չարիք չըկայ որ չընէ.*
*Պարապ տղուն եռին կ'իյնայ ու կ'իյնայ։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ՔՍԱՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ

—

## Ի Ն Ա Ր Ա Ն

*Սիրելիք, սիրեսցուք զմիմեանս։*

Ա. Յովհ. Դ. 7.

*Թարգմանութիւն*

*Սիրելիներս, մէկզմէկ սիրեմք։*

## ԽՐԱՏ

*Գործքերուդ մէջ սէրն չը մոռնաս,*
*Բերնէդ ելնէ մեղմ, համեղ ձայն.*
*Օրհնեալ Կուսին Որդւոյն նման՝*
*Սիրուն, անուշ զաւակ մ՚ըլլաս։*

# ՑՈՒՆՈՒՆԱՐ

## ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Ճանապարհք ամբարշտաց խաւարինք։*

Առակ. Դ. 19.

*Թարգմանութիւն*

*Չարպարծներուն ճամբաները մութ ու խաւար են։*

## ԽՐԱՏ

*Մեղքը չես որ մութը մնաս*
*Դժոխային չար մարդոց պէս.*
*Անդարձ՝ արև, օր չըտեսնես,*
*Հուրն յաւիտեան մեղքէդ քաշես։*

# ՅՈՒՆՈՒԱՐ

## ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Մի ինչ ըստ գրգռութեան, և մի ինչ ըստ սնապարծութեան:*

Փիլիպ. Բ. 3.

*Թարգմանութիւն*

*Կոխ հանելու և փուճ տեղը պարծանք ընելու բան՝ մի ընէք:*

## Խ Ր Ա Տ

Դուրսը փողոցն իրար անցում թէ կոխ ըլլայ,
Ձեր տունը մէջ խաղաղութիւնն ամբողջ մնայ.
Եղբօր, Քրօջ մէջ տեղ բնաւ երբէք պէտք չէ,
Ո՛ր և իցէ բանի համար խօսք, կռիւ ելնէ:

# ՑՈՒՆՑՈՒԱՐ

## ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՄԻԵՐՈՐԴ ՕՐ

—

## Բ Ն Ա Բ Ա Ն

*Անարհամարհեսցուք զմիմեանս յաւ համարել առաւել քան զանձինս։*

Փիլիպ. Բ. 3.

*Թարգմանութիւն*

*Անարհ ըլլալով՝ մէկզմէկ ձեզմէ վեր պէտք է որ սեպէք։*

## Ք Ր Ա Տ

Մէկզմէկ միշտ պատուել ջանամք,
Զըլլայ որ զմեզ գերադասեմք.
Ամենա իրար սրտանց ՍԻՐԵԼ,
Էր մեզ Փրկչին ՎԵՐՋԻՆ Պատուէր։

# Առ Վերծանողսն.

Այս Ձեր ընդունելի առաջին ՅԱՂԹԱՆԱԿը որ է ՆՈՒԷՐ ՀՈԳԵՒՈՐ, Սիրով վերջացունելէն յետոյ՝ հարկ կ'ըլլայ ծանուցանել Առոգանութեան վերաբերեալ՝ զոնէ այս Ոտանաւոր Արտաքոյ պարունակած զանազան բառերուն մեր լեզուին յատուկ եղած բազաձայն գրոց մէջ տեղը զօրութեամբ հնչուած բնաւոր (ը) ձայնը որ տե՛ղ տեղ տարաշխարհութեան յարմար բերելով կարգացուիլ պէտք լինելոյն ազագաւ՝ Թէպէտ և Առոգանութեան կանոնաց վերայ փոքր ի շատ տեղեկութիւն ունել կը հարկաւորի, գիտցողին խօսք չէոյ, բայց նորավարժն ալ սխալ հնչելոյ կրգմանէ վախտ տեղի չունենար քանի որ իւր Արգոյ Ուսուցիչը Թէ իւր գրել տուած Դատաստարէնի՝ կամ ընդարձակագոյն Քերականութենէ կամ Թէ ո՛ր և իցէ ընտիր Հեղինակութենէ մը դաս տարու

1669-1678


<< Ազգային գրադարան
NL0025848
№ 10

<< Ազգային գրադարան
NL0025843
№ 5

<< Ազգային գրադարան
NL0025847
№ 9

<< Ազգային գրադարան
NL0025842
№ 4

<< Ազգային գրադարան
NL0025846
№ 8

<< Ազգային գրադարան
NL0025841
№ 3

<< Ազգային գրադարան
NL0025845
№ 7

<< Ազգային գրադարան
NL0025840
№ 2

<< Ազգային գրադարան
NL0025844
№ 6

<< Ազգային գրադարան
NL0025839
№ 1